

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՎԱՐՊԵՏ ՄԻՆԱՍ ԵՒ ԻՐ
ՈՐՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Նկարիչ Ս. Խաչատրեանը, իր վերջին ճամբորդութեան ընթացքին Պարսկաստանում, Սեֆեվեան շրջանի հին որմանկարների վերարտադրութիւնից բացի, Նոր-Ջուղայում, Խաչա Պետրոսի տանը, յայտնագործեց նշանաւոր հայ նկարիչ վարպետ Մինասի նկարները: Այդ մի մեծ անակնկալ էր, որովհետեւ Սեֆեվեան շրջանի այդ նշանաւոր հայ արւեստագէտի գործերը համարուում էին ոչնչացած: Նոյն իսկ վարպետ Մինասի անունը անյայտ է հայութեան սուար զանգածներին եւ նրա գոյութեան մասին մի քանի մտաւորականներ եւ բանասէրներ միայն տեղեկութիւն ունեն:

Ո՞վ էր այս անհնաւոր արւեստագէտ հայը:

Միայն Առաքել Դարբիժեցու պատմութեան մէջ է որ վարպետ Մինասի մասին կարող ենք որոշ տեղեկութիւններ գտնել: Ըստ Դարբիժեցու, Շահ Աբբաս Մեծի անմիջական յաջորդ, Շահ Սեֆիի օրով, Սպահանում ապրում էին երկու մեծ նկարիչներ — վարպետ Մինասը եւ վարպետ Յակոբջանը, «որք են պարծանք եւ օգուտ մերում ազգի»: Վարպետ Յակոբջանի մասին ուրիշ ոչ

մի յիշատակում չկայ. Դարբիժեցին խօսում է միայն Մինասի մասին՝ մանրամասնօրէն տալով նրա կենսագրութիւնը:

« Այս վարպետ Մինաս ստացաւ իւր արւեստ պատկերահանութեան եւ ծաղկարարութեան. . . ի քաղաքն Բերիայ որ է Հալապ. եւ անդ եգիտ գայր ոմն պատկերահան վարպետ, որ էր ազգաւ Ֆռանկ, աշակերտեցաւ Ֆռանկ վարպետին եւ ուսաւ ի մանէ. և յետ ուսանելոյն ինքնագլուխ եղել. եւ եկեալ ի քաղաքն Ասպահան քնակեցաւ ի տան իւրում, որ էր ի մէջ Ջուղայեցոց, եւ գործէր զարւեստն իւր զպատկերահանութեան: Եւ վասն կարի առաւել վայելչակերտ գեղեցկատիպ չքնադատես յօրինածոյ արւեստին, մեծամեծքն Ջուղայեցոց տանէին ի ծաղկել եւ ի պատկերագրել զյարկս ապարանից եւ տանց իւրեանց. այսպէս եւ խաչա Նագարի որդի Խաչա Սաֆրագն տարեալ ի տուն իւր առ ի գարդարել գապարանս իւր ծաղկօք եւ պատկերօք*):

Ապա Դարբիժեցին յիշում է, որ մինչև վարպետ Մինասը ծաղկանկարում էր խաչա Սաֆրագի ապրանքը, Շահ Սեֆիին հիւր եկաւ խաչայի մօտ եւ հիանալով հայ վարպետի որմանկարներով, ցանկացաւ տեսնել նրան: Դարբիժեցին մտնելով մանրամասնու-

*) Պատմութիւն Առաքել Դարբիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 409—413:

քիւնների մէջ պատմում է, թէ ինչպէս խնջոյքին ներկայ էր նաև Շահ Սէֆիի մի նախարարը, Չըրաղ խան, որ չափազանց այլանդակ արտաքինով մի մարդ էր: Թագաւորը զարմուքեան համար երամայում է վարպետ Մինասին նկարել նրան, եւ նմանութիւնը այնքան ուժեղ է լինում, հայ արւեստագէտը այնպիսի նկարչական հմտութիւն է ի յայտ բերում, որ «յայնմ օրէ եւ առ յայայ թագաւորն եւ նախարարին իւր ոչ թողին զնա ի ձեռաց, այլ հանապազ ի տունս իւրեանց պահէին վասն նկարակերտութեան»:

Այդ դէպքից յետոյ, վարպետ Մինասը պալատական նկարիչների մէջ ամենամեծ դիրքերից մէկն էր գրաւում: Եւ մի օր էլ, յաղթելով պալատական նկարիչների գլխաւոր նաղաշ Մահմատ բէգին՝ շահեց առաջնութիւնը եւ արժանացաւ Շահ Սէֆիի մեծ պարգեւներին:

Վարպետ Մինասը ուներ բազմաթիւ աշակերտներ, որոնք նրա մօտ կատարելագործում էին նրկարչական արւեստը, բայց նրանցից եւ ոչ մէկը չկարողացաւ գերազանցել վարպետին: Դարիժեցին հիացած դրւատում է նրա տաղանդը, եւ որպէս գովեստ իւր պատմութեան մէջ գրում է, որ վարպետ Մինասը օժտւած էր բընածին շնորհով և «տեսութեամբ մտաց, որ յառաջագոյն գորպէսն եւ գիանգամանս, գորակս, եւ գփանակս կերպարանաց ամենայն իրաց, կերպարանաց նշգրտապէս ի միտս իւր եւ ապա նկարէր: Եթէ բուսոց եւ տնկոց, եթէ անասնոց եւ գազանաց, եւ թէ թռչնոց եւ մարդոց: Եւ թէ մարդոց՝ որոց ազգաց եւ իցէ, թէ պարսից, թէ հայոց, թէ եբրա-

յեցոց, թէ հնդկաց, թէ ֆոսնկաց, թէ ռուսաց, թէ վրաց, քանզի որում ազգի կերպարան որ նկարէր, ամենեւին յար եւ նման նկարէր. այնպէս եւ ի ներգործութիւնս եւ ի կիրս մարդկան... թէ ի ծիծաղել, թէ ի բարկանալ, թէ ի տրտմութեան, թէ յարբեցութեան, թէ յօրանջել, թէ ի ուրախութեան, թէ ի մարտ պատերազմի . . . Այլեւ գծամանակն կենաց մարդոյն նրկատեալ մտօք իւրովք, ըստ նմին եւ նկարէր զգեղն եւ զգոյնն, եւ զկերպարան հասակի մարդոյ նրկարէր... եւ յորում հասակի լինէր գաղափարն, այնմ հասակի յարմարեալ նմանեցուցանէր զնրկարեալ պատկերն, եւ թէ ձիթով պատկեր, եւ թէ առանց ձիթոյ, ի քարտիսի, ի կտաւի, ի տալստակի, ի պղնձի, ի յարմն եւ այլ ինչ կերպիւ յոր եւ պիտոյանայր: Այլ եւ զորոց էր ծաղկոց... քանզի գամենայն մասնաւոր արհեստ, որ այսմ նկարակերտ արւեստիս հետեւի, գամենայն անթերի գիտէր»:

Վարպետ Մինասը միաժամանակ « հմուտ էր եւ բժշկական արւեստի »:

Այսօրվան կարող եւ բազմատաղանկ անձից սակայն, բացի մի շարք որմանկարներից, ոչինչ չի մնացել: Այդ որմանկարները գտնուում են Ջուղայում, խոջա Պետրոսի տանը, չափազանց ողբալի վիճակում: Նկարիչ Ս. Խաչատրեանը վերակազմել է այդ որմանկարներից 20 կտոր:

Նկարչութեան պատմութեան էջերում վարպետ Մինասի եւ Ս. Խաչատրեանի անունները այլեւս անխցելի կապերով կապւած են միմեանց, որովհետեւ վերջինս ոչ միայն դարերի փոշիների միջից

հանեց Մինաս վարպետի սրմանկարները, այլ եւ կարողացաւ ըմբռնել նրանց ոգին, իւրացրել վարպետ Մինասի վրձինի քափն ու ոյժը, վերակազմել նրա նրկարների երբեմն բոլորովին ազաւաղած եւ եղծանած գծերն ու գոյները: Մէկ խօսքով՝ նա ամիսներ ապրեց ժէ դարու ոգով, զգաց այն ինչ պիտի զգար մի շահ-աբբասեան նկարիչ:

Ըստ Խաչատրեանի, վարպետ Մինասի որմանկարների մէջ երբեմն աչքի էին խփում կոպիտ և գռեհիկ մարդակազմական սխալներ: Մի արձանագրութիւն, սակայն, եկաւ փարատելու վարպետ Մինասի անւան շուրջ կուտակւած կասկածները. այդ արձանագրութեան մէջ կարդում ենք որ՝ *շահ Սուլէյմանի ժամանակ մի ինչ որ անյայտ ձեռք նորոգութեան է ենթարկել վարպետ Մինասի որմանկարները.* — «Յամս քազաւորութեան Շահ Սիւլէյմանի եւ ի հայրապետութեան Սրբոյ Էջմիածնայ Յակոբ կաթողիկոսին ի քւին Ռ.Թ.Թ. ին ձեռամբ մեղաւոր Մաթէոսին որ է որդի Պրն. Մինասին, որ մանուկ տեսնէ հանգեաւ ի Քրիստոս. էր ամաց Թ.Յի. մաղթեմ ի Ձեռն ով սիրելիք, յորժամ տեսնել սորա դպիք յիշել զՄաթէոսին եւ ըզձնողսն իւր եւ պասն իւր հեգահոգի եւ ողորմած խոջա Պետրոսին եւ ընդ իւր մերձաւորացն, գոր նորագեց գտունս ցանկալի. ի վայելումն որդւոց իւրոց Պետրոս ցանին: Տեսուն Տէրանց տայցէ բերկրել. յարազարն յախտեանին, որ է յախտեանս յախտեանից, ամէն»:

Պէտք է ենթադրել, որբեմն, որ նկատուող սխալները արդիւնք են Շահ Սուլէյմանի անտաղանդ

նկարչի «վերանորոգութեան»:

Վարպետ Մինասի քսան գլխաւոր որմանկարների մէջ, Ս. Խաչատրեանը ամենից անելի նշանակութիւն է տալիս մէկին, որ պատկերացած է շահ Աբբաս Մեծը, խոջա Պետրոսի ապարանքում, խնջոյքի ժամանակ: Շահ Աբբասը գինու գաւաքը ձեռքին՝ բազմել է արձայական գանի վըրա, եւ խոջա Պետրոսը նրա առջեւը խոնարհած մատուցանում է պտուղներով լեցուն մի սկաւռակ: Շուրջը՝ պարու հիներ, ագնրականներ, պալատականներ եւ այլն: Այդ որմանկարը ոչ միայն նկարչական մեծ արժէք ունի, այլ եւ մի պատմական ապացոյց է այն բարեացակամ վերաբերմունքին, որ շահ Աբբաս ցոյց էր տալիս հայերին: Նա վկայում է նոյնպէս այն մեծ նշանակութիւնը, որ հայերն ունէին Պարսկաստանի համար երեք դար առաջ:

Վարպետ Մինասը, ինչպէս տեսնւմ, նկարչութեան արւեստը սովորել էր Հայկում, մի երոպացի վարպետի ձեռքի տակ: Այստեղից եւ երոպական ազդեցութիւնը նրա գործերի մէջ: Նրա սկզբնական մի քանի նկարները գուտ երոպական ոգով են նկարւած: Հեռանկար, լոյս, սոււեր, երոպական ոճով ապարանքներ, երոպական զգեստներ, արեւմտեան դէմքեր: Բացի այդ, ինչպէս Դարիժեցին էլ հաստատում է, վարպետ Մինասը գործածելիս է եղել իւզաներկեր, որ այն ժամանակ դեռ եւս ընդունուած չէր պարսիկ նկարիչների մօտ: Մի այլ բնորոշ գիծ եւս. վարպետ Մինասը անմտան նկարիչ է եղել զագանների եւ նրա նկարների մէջ տեսնում ենք նոյն իսկ խոզեր, որ մահմետա-

կանները մինչեւ այժմ էլ համարում են անմահուր կենդանի եւ խուսափում են նրանից: Հետագայում, ինչպէս ցոյց են տալիս նկարները, վարպետ Մինասը փոխել է եւրոպական ոներ եւ ընկել պարսկական նկարչութեան ուժեղ ազդեցութեան տակ: Այդ շրջանից նա այլեւս թողնելով լոյսն ու հեռանկարը՝ նկարում էր գծերով, ինչպէս նրա ժամանակակից Ռեզա Աբբասին, Մոգաֆֆար Ալին եւ նրանց հետեւորդ նկարիչները:

Այս երկրորդ շրջանի նկարների մէջ առանձնապէս ցայտուն կերպով յայտնագործուում է իսլամական արտադրութեան տաղանդը: Նրա նկարները գրաւում են դիտողին իրենց արտայայտութեան ուժով, գոյնների ու գծերի հրաշալի ներդաշնակութեամբ եւ եզակի շարժումութեամբ: Վարպետ Մինասի «փիղը», օրինակ, մարմնացումն է ջլուտ եւ ահաւոր ուժի: Նրա ձիւտները, պատերազմական կտորները համակ շարժում են՝ միացած գոյների եւ գծերի կատարեալ համերաշխութեամբ:

Վարպետ Մինասը 17րդ դարում ունեցել է մի ոն, նկարչական արտայայտութեան մի ձեւ, որ լիովին համապատասխանում է 20րդ դարու արդիական ոնին: Մենք համոզւած ենք, որ նրա նկարների ցուցադրութիւնը եւրոպայում պիտի ապահովէ փայլուն յաջողութիւն: Եւ մեր հին մատենագիր Գարիժեցու հետ գալիս ենք գոչելու. «Ահա պարծանքը հայ ազգի»:

ԶՕՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ

Թեհրան

ԹԵ ԻՆՉՈՒ ՄԻԱՅԱՆՔ

«ԻԹԻԻՀԱՏ»Ի ՀԵՏ

Վահան Փափագեանի «Վէմ»-ի Ա. համարին մէջ գրած յօդւածը յիշեցուց ինձ, Փարիզի մէջ Երիտասարդ Թիւրքերու հետ մեր կատարած նախասահմանադրական շրջանի համաժողովը:

Այս համաժողովը՝ տասնեակ մը տարիներ առաջ նոյնպէս Փարիզի մէջ Երիտասարդ Թիւրքերու հետ տեղի ունեցած առաջին համաժողովին կրկնութիւնն էր, միևնոյն նպատակը հետապնդող:

Այն ժամանակուան ժողովին կը մասնակցէին, ի միջի այլոց Միսեան (Ա. Ահարոնեան), — որ իր հերթին նախագահեց նաեւ ժողովին, — Միհաս Չեքագ, տողերս գրողը, եւ ուրիշներ:

Նախորդ համաժողովի փորձառութեամբ, մենք՝ հայ պատգամաւորներս՝ գիտնալով հանդերձ թէ Երիտասարդ Թիւրքերու վրա վստահութիւն չըլլար, ազգային առաւելագոյն իրաւունքներ եւ անոնց գործադրութեան համար գրաւոր կամ թէ հրապարակային խոստումներ առնելու համար՝ 1907ին կրկին միացանք Երիտ. Թիւրքերու հետ:

1907 նոյեմբ. 7ին՝ գաղտնի ժողովի մը մէջ՝ Թիւրքերու հետ համաձայնեցանք հետեւեալ երեք կէտերու շուրջ.

1. Այսօրուան վարչաձևը տապալել.

2. Սահմանադրական կարգերը՝ Երեսփոխանական ժողովը հաստատել.

3. Այս նպատակին հասնելու համար ամէն միջոց գործածել:

Բուն ժողովներուն, որոնք նաեւ հրապարակային չէին, այլ